ԱՄՀ Գործադիր խորհուրդը եզրափակում է Հայաստանի Հանրապետության հետ «Սթենդ-բայ» պայմանավորվածության շրջանակում առաջին ամփոփիչ ստուգումը

20 դեկտեմբերի, 2019 թ.

- Հայաստանի տնտեսության կատարողականը բարձր է՝ առողջ տնտեսական աճով, ցածր գնաճով, կանուն ֆինանսական համակարգով, արտաքին պահուստների աճով և ավելի բարձր եկամուտներով:
- Չնայած հարկաբյուջետային ցուցանիշների գերակատարմանը, առանցքային է բարեփոխումների իրականացման թափի պահպանումը՝ եկամուտների ներգրավումն ուժեղացնելու, այդ թվում՝ գույքի հարկման բարեփոխոխումներն ավարտին հասցնելու միջոցով:
- Իշխանությունների բարեփոխումների օրակարգի, այդ թվում՝ կառավարման բարելավմանն ուղղված ջանքերի իրականացումը հակակոռուպցիոն համապարփակ համակարգի ստեղծմամբ, կայուն և ներառական աճի համար հենարան կլինեն:

2019 թ. դեկտեմբերի 20-ին Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Գործադիր խորհուրդն ավարտեց Հայաստանի Հանրապետության կատարողականի առաջին ամփոփիչ ստուգումը «Սթենդ-բայ» պայմանավորվածության աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակում (SBA): 180 միլիոն ՓՀԻ (շուրջ 248.2 միլիոն ԱՄՆ դոլար) ընդհանուր գումարի հասանելիությամբ 36-ամսյա SBA-ը, որը համարժեք է ԱՄՀ-ում Հայաստանի քվոտայի 139.75 տոկոսին, ԱՄՀ խորհրդի կողմից հաստատվել է 2019 թ. մայիսի 17-ին (տե՛ս թիվ 19/173 Մամլո հաղորդագրությունը):

Հայաստանի իշխանությունները շարունակում են SBA-ը դիտարկել որպես կանխարգելիչ՝ մինչ 2021թ. մայիսի 16-ին ծրագրի ժամկետի լրանալը. ապահովագիր տնտեսական չկանխատեսված ցնցումներից, որոնք կարող են վճարային հաշվեկշռում կարիք առաջացնել:

Գործադիր խորհրդի կողմից այսօրվա քննարկումից հետո Կառավարիչ տնօրենի տեղակալ և նախագահողի պաշտոնակատար պրն. Միցուհիրո Ֆուրուսավան արեց հետևյալ հայտարարությունը.

«Հայաստանի տնտեսական կատարողականը բարձր է, ընդ որում առողջ տնտեսական աճով, ցածր գնաճով, կայուն ֆինանսական համակարգով և

բարելավվող արտաքին և հարկաբյուջետային բուֆերներով: Պետական պարտքը մնում է նվազման ուղու վրա, ընդ որում ակնկալվում է, որ Հայաստանն իր միջնաժամկետ պարտքի նպատակին սպասվածից մի քանի տարի ավելի վաղ կհասնի: Նշված նպաստավոր հեռանկարը տալիս է բարեփոխման ջանքերն արագացնելու հնարավորություն՝ աջակցելով ավելի հավասարակշռված և ներառական աճին, աղքատության նվազմանը և գործազրկության կրճատմանը:

«2019 թ. հարկաբյուջետային ցուցանիշներով բյուջեն գերակատարվեց՝ արտացոլելով եկամուտների սպասվածից բարձր և կապիտալ ծախսերի սպասվածից ցածր մակարդակը: Կապիտալ ծախսերի իրականացման ամրապնդումը՝ հանրային ներդրումների կառավարման կայուն գործընթացին համահունչ, մնում է առաջնահերթ: Չնայած հարկաբյուջետային ցուցանիշների գերակատարմանը, բարեփոխումների թափն անհրաժեշտ է պահպանել՝ եկամուտների ներգրավումը բարելավելու համար, այդ թվում՝ ավարտելով գույքի հարկման բարեփոխումները և էլ ավելի ուժեղացնելով եկամտային վարչարարությունը: Բյուջետային գործընթացի ամրապնդումը ևս հարկաբյուջետային կանոնի վստահելիության լրացուցիչ երաշխիք կլինի:

«Դրամավարկային քաղաքականության ծրագրով գների կայունության շեշտադրումը Հայաստանին լավ է ծառայել: Իշխանությունների կողմից Բազել III-ի միջոցառումների իրականացումը կբարձրացնի ֆինանսական համակարգի դիմակայությունը. միաժամանակ ողջունելի են կապիտալի շուկան զարգացնելու և ֆինանսական մատչելիությունը բարելավելու նրանց ծրագրերը:

«Իշխանությունների բարեփոխումների օրակարգի իրականացումը կայուն և ներառական աճի համար հենարան կլինի: Ընթացքում են գտնվում կառավարման բարելավմանն ուղղված ջանքերը՝ հակակոռուպցիոն համապարփակ համակարգի ստեղծմամբ: Իշխանությունները վերահաստատեցին առավել խոցելի խավին պաշտպանելու իրենց հանձնառությունը՝ ընդլայնելով և ավելի հասցեական դարձնելով սոցիալական ապահովության իրենց ցանցը: Մարդկային կապիտալի հզորացմանն ողղված քայլերի բարելավումը և աշխատուժի կազմում կանանց մասնակցության մեծացումն առանցքային հարցեր են իշխանությունների երկարաժամկետ կառուցվածքային օրակարգում»:

Աղյուսակ 1. Հայաստան. Ընտրված տնտեսական և ֆինանսական ցուցանիշներ, 2016–24 թթ.

	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024
	Փաստ.	Փաստ	Փաստ.	Կանխ.					
Ազգային եկամուտ և գներ									
Իրական ՀՆԱ (տոկոսային փոփոխություն)	0.2	7.5	5.2	6.5	4.9	4.5	4.5	4.5	4.5
Վերջնական սպառման ծախսեր, նպաստ. ՀՆԱ-ին	-0.9	7.4	2.7	8.3	3.3	1.3	1.7	1.7	1.8
Հիմնական կապիտալի համախառն կուտակում, նպաստ. աճին	-2.4	1.5	0.8	2.1	2.5	3.0	2.3	1.9	1.5
Պաշարների փոփոխութ., նպաստ. աճին	0.7	1.1	4.0	-3.6	-1.0	0.0	0.0	0.0	0.0
Ապրանքների և ծառայ. զուտ արտահանում, նպաստ. աճին	3.1	-1.2	-1.8	-0.2	0.1	0.2	0.5	0.9	1.2
Համախառն ներքին արդյունք (միլիարդ դրամ)	5,067	5,564	6,005	6,541	7,095	7,636	8,283	8,992	9,751

Համախառն ներքին արդյունք (միլիոն ԱՄՆ դոլար)	10,546	11,527	12,433	13,444	14,132	14,839	15,704	16,632	17,596
Համախառն ներքին արդյունք՝ մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	3,524	3,869	4,188	4,528	4,759	4,997	5,288	5,599	5,924
ՍԳԻ (ժամանակ. միջին, տոկոս. փոփոխություն)	-1.4	1.0	2.5	1.6	2.5	3.3	4.0	4.0	4.0
ՍԳԻ (ժամանակ. վերջ, տոկոս. փոփոխ.)	-1.1	2.7	1.8	1.5	3.3	3.8	4.1	4.0	4.0
ՀՆԱ դեֆլյատոր (տոկոս. փոփոխ.)	0.3	2.1	2.5	2.3	3.4	3.0	3.8	3.9	3.8
Գործազրկ. մակարդակ (տոկոս)	20.4	18.9	18.5	17.6	17.5	17.2	16.9	16.8	16.7
Ներդրումներ և խնայողություն.	(ՀՆԱ-ի տոկոս)								
Ներդրումներ	18.0	19.3	22.4	22.9	24.1	25.2	25.3	25.3	25.3
Ազգ. խնայող.	16.0	16.3	13.0	14.9	16.2	17.7	18.2	18.9	19.3
Փող և վարկ (ժաման. վերջ)	(տոկոսային փոփոխություն)								
Փողի բազա	13.1	-1.0	17.8	9.0	8.8	8.0	8.3	8.5	8.7

Փողի զանգված	17.5	18.5	7.4	9.1	8.8	8.0	8.3	8.5	8.7
Մասնավոր հատվածի վարկավորման աճ	6.0	16.5	17.2	16.0	11.5	11.0	10.5	9.0	8.5
Կենտրոնական կառավարութ. գործառնություն.	(ՀՆԱ-ի տոկոս, եթե այլ բան նշված չէ)								
Եկամուտներ և դրամաշնորհներ	21.4	21.2	22.3	23.5	23.9	23.8	24.0	24.2	24.3
Որից՝ հարկային եկամուտներ	20.1	20.2	20.7	21.8	22.3	22.5	22.7	22.9	23.1
Ծախսեր	27.0	26.0	24.1	25.0	26.2	25.7	25.9	26.1	26.2
Ընդհանուր հաշվեկշիռը՝ դրամարկղային սկզբունքով	-5.6	-4.8	-1.8	-1.5	-2.3	-1.9	-1.9	-1.9	-1.9
Պետական և պետության կողմից երաշխավորված (ՊՊԵ) պարտք	56.7	58.9	55.8	53.6	53.5	52.6	51.6	50.7	50.0
Կենտրոնական կառավարութ. ՊՊԵ պարտք (տոկոս)	52.0	53.7	51.3	50.0	50.6	50.4	49.9	49.5	49.1
Արտարժութ. պարտքի	80.9	81.1	72.2	72.1	71.1	69.9	68.4	68.6	68.6

մասնաբաժինը (տոկոս)									
Արտաքին հատված	(միլիոն ԱՄՆ դոլար, եթե այլ բան նշված չէ)								
Ապրանքների և ծառայություն. արտահանում	3,501	4,312	4,700	4,963	5,182	5,484	5,828	6,235	6,636
Ապրանքների և ծառայություն. ներմուծում	-4,517	-5,723	-6,647	-6,887	-7,151	-7,505	-7,911	-8,343	-8,841
Ապրանքների և ծառայություն. արտահանում (տոկոս. փոփոխ.)	11.6	23.2	9.0	5.6	4.4	5.8	6.3	7.0	6.4
Ապրանքների և ծառայություն. ներմուծում (տոկոս. փոփոխ.)	2.2	26.7	16.1	3.6	3.8	5.0	5.4	5.5	6.0
Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ (ՀՆԱ-ի տոկոս)	-2.1	-3.0	-9.4	-8.0	-7.9	-7.5	-7.1	-6.4	-6.0
ՕՈՒՆ (զուտ)	263	222	247	296	318	341	369	399	440
Համախառն միջազգային պահուստներ	2,204	2,314	2,259	2,357	2,363	2,405	2,457	2,646	2,669
Ներմուծման ծածկույթ 1/	4.6	4.2	3.9	4.0	3.8	3.6	3.5	3.6	3.4

Ժաման. վերջի փոխարժեք (դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց)	484	484	484	…	…	…	…	…	…
Միջին փոխարժեք (դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց)	480	483	483	…	…	…	…	…	…

Աղբյուրը՝ ՀՀ իշխանություններ և ԱՄՀ աշխատակազմի հաշվարկներ և կանխատեսումներ:

1/ Համախառն միջազգային պահուստներն՝ ըստ ապրանքների և ծառայությունների հաջորդ տարվա ներմուծման ամիսների, այդ թվում՝ պահվող ՓՀԻ:

ԱՄՀ հաղորդակցության վարչություն
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝ Ռանդա Էլնագար
Հեռ.՝ +1 202 623-7100 **Էլ. փոստ՝** MEDIA@IMF.org
@IMFSpokesperson